ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Վարդան Հարությունյանի՝ Բելգիայի Թագավորություն կատարած այցի արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Վարդան Հարությունյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Բրյուսել, Բելգիայի Թագավորություն, 2017թ. հուլիսի 5-8-ը,

4. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպության գլխավոր քարտուղար Կունիո Միկուրիա:

5. Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝

Մասնակցություն Համաշխարհային մաքսային կազմակերպության Մաքսային համագործակցության խորհրդի 129-րդ/130-րդ նստաշրջաններին:

6. Քննարկված թեմաները՝

Նստաշրջաններին մասնակցում էին ՀՄԿ 182 անդամ-պետությունների մաքսային ծառայությունների պատվիրակություններ: Մաքսային համագործակցության խորհրդի հերթական 129-րդ և 130-րդ նստաշրջաններին, ի թիվս մի շարք կարևոր հարցերի, քննարկվեցին ՀՄԿ կոմիտեների, ենթակոմիտեների և հանձնաժողովների նախորդ տարվա ընթացքում կատարված աշխատանքները, մաքսային ծառայություն - ոստիկանություն համագործակցությունը, մաքսային ծառայություն - հարկային ծառայություն համագործակցության հեռանկարներ, լիազորված տնտեսական օպերատորներին, առևտրի դյուրացմանը, մաքսային հսկողության պարզեցմանը և սահմանների համալիր կառավարմանը վերաբերող հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՄԿ տարեկան նստաշրջանները լայն հարթակ են հանդիսանում նաև երկկողմ հանդիպումների համար: ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահն անցկացրեց երկկողմ հանդիպումներ Իրանի Իսլամական Հանրապետության և Ֆինլանդիայի Հանրապետության մաքսային

ծառայությունների ղեկավարների հետ, քննարկվեցին երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր և ուրվագծվեցին հետագա համագործակցության հեռանկարները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Նստաշրջանների ընթացքում քննարկվեց մաքսային ոլորտին վերաբերող հարցերի լայն շրջանակ, լսվեցին ՀՄԿ քաղաքականության հանձնաժողովի, ֆինանսական կոմիտեի և աուդիտի կոմիտեի տարեկան հաշվետվությունները: Տեղի ունեցան ՀՄԿ նախագահողի ընտրություններ, որոնցում հաղթեց Ուրուգվայի մաքսային ծառայության ղեկավարը: Միևնույն ժամանակ տեղի ունեցան ՀՄԿ քաղաքականության հանձնաժողովի, ֆինանսական կոմիտեի և աուդիտի կոմիտեի անդամների ընտրություններ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հաշվի առնելով քննարկվող հարցերի ծավալը՝ որոշում կայացվեց 2017 թվականի դեկտեմբեր ամսին ք. Բրյուսելում հրավիրել ՀՄԿ արտահերթ նստաշրջան:

10. Գործուղվողը՝

Վարդան Հարությունյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը՝

11.07.2017թ.